



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Handwritten signature

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

« 04 » 05 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 44

Ձեռնարկողը՝

<<Կողբարար>> ՍՊԸ

ՀՀ Տավուշի մարզ, գ. Կողբ. փողոց 31, սուսն 2

Գործունեությունը՝

**Հարճիշտ-Պարղավանի ԱԿԽ հանքավայրի
բացահանքի շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

ՀՀ Տավուշի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 44

<< 04 >> 05 2017թ.

Հարձիշտ-Պտղավանի ԱԿԽ հանքավայրի բացահանքի շահագործման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվություն

Արթուր Բեկ Սյուրյան
Գեղամ
10.05.2017թ.

- Պատվիրատու՝ <<Կողբաքար>> ՍՊԸ
- Նախագծող՝ <<Կողբաքար>> ՍՊԸ
- Ներկայացված նյութեր՝ Աշխատանքային նախագիծ.
- շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվություն (ՇՄԱԳ),
- նախագծային փաստաթղթեր և գծագրական նյութեր
- Տեղադրման վայրը՝ ՀՀ Տավուշի մարզ

Հարձիս-Պտղավանի ավազակոպճային խառնուրդի (Ա.Կ.Խ) հանքավայրի բացահանքերի մշակման նախագիծը իրականացվել է <<Կողբաքար>> ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Հարձիս-Պտղավանի (Ա.Կ.Խ) հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքները պաշարների հաշվարկումով առ 01.07.2001թ. դրությամբ կատարվել է <<Գալենիտ>> ՍՊԸ-ի կողմից: Հանքավայրի ստատիկ պաշարները հաստատվել է ՀՀ ՊՊՀ-ի կողմից 19.10.2001թ. թիվ 112 արձանագրությամբ, ըստ C1 կարգի 40.4հազ.մ³ քանակով:

20.03.2008թ. ՀՀԲՆ ՕՀՊԳ կողմից թիվ 162 որոշմամբ կատարվել է պաշարների վերահաստատում և Հարձիս-Պտղավանի ավազակոպճային խառնուրդի (Ա.Կ.Խ) հանքավայրի պաշարները դասվել է ըստ C1 կարգի վերականգնվող պաշարների դասին՝ 1 միավոր վերականգնման գործակցով: Պաշարները հաշվարկված են 4 հատ միմյանցից մեկուսացված առանձին տեղամասերով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 16.12.2016թ. լրանում է հանքավայրի շահագործման ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը: Ընկերությունը՝ համաձայն Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի, ցանկանում է կատարել իրավունքի ժամկետի երկարաձգում 50 տարով:

Համաձայն նախագծային փաստաթղթերի, բերված հատիկաչափական և ֆիզիկամեխանիկական հատկությունների ցուցանիշների, հանույթը համապատասխանոում է գործող 23735-79 ԳՈՍՏԻ-ի պահանջներին և կարելի է օգտագործել ինչպես ճանապարհաշինարարական, այնպես էլ շինարարական այլ աշխատանքների համար:



Հարձիս-Պտղավանի ԱԿԽ հանքավայրի չորս տեղամասերը գտնվում են Տավուշի մարզում (Դեբետ գետի ողողադաշտի միայն աջ ափին), Հարձիս և Պտղավան գյուղերի վարչական տարածքում: Հանքավայրը կազմված է նեղ ձգված չորս կուտակներից, որոնցից երկուսը գտնվում են Պտղավան գյուղի, իսկ մնացած երկուսը՝ Հարձիս գյուղի տարածքում: Հետախուզված չորս կուտակներից բաղկացած հանքավայրի մակերեսը՝ ըստ նախագծի, կազմում է 4,46հա, ընդ որում Պտղավանի տարածքում հետախուզված է 3,0հա մակերես, իսկ Հարձիսի տարածքում՝ 1,46հա: Օգտակար նստվածքաշերտի կազմաբանությունը և հանքավայրի յուրահատուկ լեռնաերկրաբանակն և լեռնատեխնիկական պայմանները հնարավորություն են տալիս հանքավայրի մշակումը նախատեսել բաց եղանակով, առանձին բացահանքերով (բացահանքերը տեղամասերում շահագործվելու են հաջորդաբար)՝ տարեկան 6.8հազ.մ³ ԱԿԽ-ի արտադրողականությամբ:

Ելնելով այն հանգամանքից, որ հանքավայրի Հարձիս և Պտղավան տեղամասերը գտնվում են Դեբետ գետի արևելյան սանդղափուլում, գետի սահմաններից 10.0-30.0մ հեռավորության վրա, նախատեսվում է բացահանքերի սահմանները եզրագծել պաշարների եզրագծման սահմաններով՝ առանց բնամասեր թողնելով: Քանի որ, հանքավայրի տեղամասերի պաշարները դինամիկ վերականգնվող են, ուստի բացահանքերը վերջնական եզրագիծ չունեն: Դրանց վերջնական եզրագիծը կանխորոշվում է յուրաքանչյուր սեզոնի ավարտին նրանց ունեցած պարամետրերով: Համաձայն նախագծի բացահանքերի պարամետրերը վերջնական դիրքում կարող են ունենալ աղյուսակով ներկայացված հետևյալ ցուցանիշները.

Պարամետրերի անվանումը	Չափ. միավոր	Հարչիս տեղամաս		Պտղավան տեղամաս	
		I-ին բացահանք	II-րդ բացահանք	I-ին բացահանք	II-րդ բացահանք
Ամենամեծ երկարություն	մ	380	400	220	180
Ամենամեծ լայնություն	մ	50	40	40	45
Մշակման խորություն	մ	0.84	0.9	0.97	0.82
Օտարման մակերես	հա	1.48	1.42	0.76	0.7
Կորզվող պաշարներ	մ ³	12513.0	12815.0	7364.0	5719.0

Տեղում կատարված զննումներից պարզվեց, որ բոլոր տեղամասերը ապահովված են մերձատար ճանապարհներով:

Համաձայն նախագծում ներկայացված տվյալների օգտակար հանույթի ընդհանուր կորզվող պաշարները բացահանքերում կազմում է 38411.0մ³, բնապահպանական նկատառումներով օգտակար հանածոյի կորուստները բնամասերում կազմում է հաշվեկշռային պաշարների մոտ 5%:

Հանքավայրը նախատեսվում է շահագործել սեզոնային ցիկլով, բաց մշակման եղանակով, օգտագործելով հակառակ թիավոր էքսկավատոր կամ դիագլայն:

Նախագծում հաշվի է առնված բնապահպանական հետևյալ պահանջները.

- Դեբետ գետի հունը տեղամասերի շահագործման ընթացքում չի տեղափոխվելու: Հետևաբար տեղի չի ունենալու ձկնատեսակների ձվադրատեղերի ոչնչացում, ջրահոսքի արագության փոփոխություն:

- բացահանքը շահագործելիս բացառվելու է Դեբետ գետի ջրերի մեխանիկական աղտոտումը, քանի որ հանույթային աշխատանքները կատարվելու են գետի հունի սահմաններից դուրս, այսինքն բացառվում է աղտոտված ջրերի անմիջական ելքը դեպի գետ: Միայն տիղմի լիակատար նստեցումից (ջրի պարզեցումից) հետո խրամի միջոցով կարող է այն բաց թողնվել դեպի գետ: Սույն նախագծով նշվում է, որ գետի էկոհավասարությունը չի խախտվելու և մշակված տարածության վերականգնում չի նախատեսվում, քանի որ այն վարարաջրերի ժամանակ աստիճանաբար լցվում է բերվածքներով և վերականգնվում է:



Բացահանքերի լեռնատեխնիկական վերականգնումները (ռեկուլտիվացիա) իրականացվելու են միայն արդյունաբերական աշխատանքների լրիվ ավարտից հետո: Վերականգնման ենթական տարածքները ըստ մակերեսների կազմվելու են՝ արտադրական հրապարակներ – 730.0մ², ավտոճանապարհներ՝ 2600.0մ², ընդհամենն՝ 3.33հա մակերես: Նշված աշխատանքների իրականացման համար կպահանջվի 1196.4հազ. դրամ:

Ամեն տարի, սեզոնի սկզբում և վերջում նախատեսվում է կատարել մակշեղերական դիտարկումներ՝ վարաջրերից մշակված տարածությունը լցվող օգտակար նստվածքաշերտի դինամիկ պաշարները հաշվելու և հսկելու համար:

Ընկերությունը նախատեսում է պարբերաբար հանդիպումներ կազմակերպել համայնքների ավագանու անդամների հետ, նպատակ հետապնդելով ինտեգրվել համայնքների սոցալ-տնտեսական զարգացման գործընթացին: Այս նպատակի համար ընկերությունը յուրաքանչյուր տարի, համապատասխան ոլորտներում, նախատեսում է ներդրում իրականացնել հետևյալ չափաբաժիններով.

- Համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերի մասնակցություն՝ 175.0հազ. դրամ,
- Մանկապարտեզի աշխատանքների ֆինանսական մասնակցություն՝ 150.0հազ. դրամ,
- Դպրոցի կարիքների համար՝ 50.0հազ. դրամ,
- Համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքների մասնակցություն՝ տեխնիկայի տրամադրում:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտի փաստաթղթերը, 20.04.2017թ. Այրումի համայնքապետարանում իրականացված քանրային քննարկումների արդյունքները, ինչպես նաև փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն աննշան, կարճատև և տեղային: Դրանք կներառեն, սակայն չեն սահմանափակվի հետևյալով՝ մակերևութային ջրերի աղտոտում, հողի էրոզիա, որոնք առաջանում են թափոնների ոչ պատշաճ հեռացման/տեղադրման հետևանքով, բացահնքերի շահագործման ընթացքում նավթամթերքի, յուղերի հնարավոր արտահոսք, ժամանակավոր շինհրապարակների օգտագործում (մեքենաների ավտոկայանատեղեր, պահեստավորման վայրեր և այլն), օդի ժամանակավոր աղտոտում՝ կախված շահագործման ընթացքում բեռնատարների ինտենսիվ երթևեկությունից, տեղի բնակչությանն անհանգստություն պատճառող աղմուկ և վիբրացիա:

Բացահնքերի շահագործման ընթացքում՝ իրականացվող աշխատանքների ժամանակ, առաջացող արտանետումները կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից:

Նախատեսվող գործունեության շահագործման ընթացքում նախագծում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Ըստ նախագծի լուծված են ջրերի աղտոտման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի, ռեկուլտիվացիայի հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների ծավալները, խախտվող տարածքի փոքր մակերեսը, մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է ենթադրել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պետք է ունենա կարճատև և նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:



Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:
2. Աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տեղանքի յուրահատկություններից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախագծային փաստաթղթերում և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, ինչպես նաև բնապահպանական և սոցիալ-տնտեսական պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Շահագործման աշխատանքների ընթացքում առաջացած շինադրը (կենցաղային ադր), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Անհրաժեշտ է ավագակոպձային խառնուրդի տեղափոխումն իրականացնել փակ ծածկ ունեցող բեռնատար ավտոմեքենաներով՝ համայնքի և հարակից բնակելի տարածքում փոշու արտանետումները նվազեցնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Կողբաքար>> ՍՊԸ կողմից ներկայացված Հարձիշտ-Պտղավանի ԱԿԽ հանքավայրի բացահանքի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Կ. Մովսիսյան